



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 հոկտեմբերի 2017 թվականի N 96-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 241-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝

ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2010 թվականի հոկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային ենթակայության Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից կառավարման մարմինների խորհուրդների անվանական կազմը հաստատելու մասին» N 241-Ա որոշման հավելված 109-ում «Առաքելյան Աննա» բառերը փոխարինել «Բաղդասարյան Քրիստինե» բառերով:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կից՝ ՀՀ Սյունիքի մարզի «Լիճքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի խորհրդի 2017 թվականի սեպտեմբերի 8-ի N 25 գրությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ



Վ. ՀԱԿՈԲՅԱՆ



ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
 ԼԻՃՔԻ ՄԻԶՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
 ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

№25<< 08>> 09. 2017թ. ՀՀ Սյունիքի մարզ, գյուղ Լիճք, հեռ. (0286) 60663


ՀՀ Սյունիքի մարզպետ
 պարոն Վ.Հակոբյան

Հարգարժան մարզպետ .


Հայտնում եմ Ձեզ ,որ <<Լիճքի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ –ի ծնողական խորհրդի կողմից ընտրված <<Լիճքի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ –ի կոլեգիալ կառավարման մարմնի խորհրդի անդամ Աննա Առաքելյանի լիազորությունները բնակության վայրի փոփոխության պատճառով 2017 թվականի սեպտեմբերի 1-ից դադարեցվել է :

Խնդրում եմ հաստատության խորհրդի անվանական կազմում կատարել փոփոխություն :

Կից ներկայացնում եմ ծնողական խորհրդի թիվ 2 արձանագրության քաղվածքը:

Լիճքի դպրոցի խորհրդի նախագահ 

Մ.Մարտիրոսյան



ՔԱՂՎԱԾՔ

Լիճքի միջնակարգ դպրոցի ծնողական խորհրդի N 2 արձանագրությունից

2017 թվականի սեպտեմբերի 8-ին տեղի ունեցավ << Լիճքի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ -ի ծնողական խորհրդի նիստը՝ 3 անդամների մասնակցությամբ.

ՕՐԱԿԱՐԳ

1. Դպրոցի կառավարման խորհրդի կազմում ծնողական խորհրդից ընտրված Աննա Առաքելյանի դիմումի քննարկումը : (զեկ նախագահ՝ Զ.Բաղդասարյան)

2. Դպրոցի կառավարման խորհրդի կազմում ծնողական խորհրդի կողմից նոր անդամի առաջադրում և ընտրություն : (զեկ նախագահ՝ Զ.Բաղդասարյան)

Լսեցին.-1. Դպրոցի կառավարման խորհրդի կազմում ծնողական խորհրդից ընտրված Աննա Առաքելյանի դիմում քննարկումը : (զեկ նախագահ՝ Զ.Բաղդասարյան)

Հաղորդողը նշեց ,որ բնակության վայրի փոփոխության պատճառով խորհրդի անդամ Աննա Առաքելյանը դիմել է դադարեցնել իր լիազորությունները

ՀՀ << Հանրակրթության մասին >> օրենքի հոդված 11-ի կետ 3.1 -ի համաձայն ծնողական խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

Աննա Առաքելյանին ազատել դպրոցի խորհրդի անդամի լիազորություններից:

Լսեցին.-2. Դպրոցի կառավարման խորհրդի կազմում ծնողական խորհրդի կողմից նոր անդամի առաջադրում և ընտրություն : (զեկ նախագահ՝ Զ.Բաղդասարյան)

Առաջարկվեց Քրիստինե Սերյոժայի Բաղդասարյանի թեկնածությունը :

Փակ գաղտնի քվեարկության արդյունքներից պարզվեց


Կողմ՝ 3

Դեմ՝ 0

Ուսումնական հաստատության կանոնադրության 101.1 կետի համաձայն ծնողական խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

Քրիստինե Սերյոժայի Բաղդասարյանին ընդգրկել դպրոցի խորհրդի կազմում:

Ծնողական խորհրդի նախագահ՝  Զ.Բաղդասարյան

քարտուղար՝  Կ.Զիլֆուղարյան